

ԵՐԿՐԻ ՄԱՍԻՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Վ. Մ. ՄԱՆՈՅԱՆ

ԵՐԿՐԻ ԳՆԴԱՋԵՎՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՔԵՐՅԱԼ
ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԻ Ի ՀԱՅՏ ԳԱԼՈՒ ԺԱՄԱՆԱԿԻ ՄԱՍԻՆ

(Հարցադրման շուրջ)

«Կարևորն այն չէ, որ իմանաս
թե երկիրը կլու է, այլ այն, թե
ինչպես են մարդիկ հասել դրան . . . »

Լ. Ն. ՏՈՒՍՏՈՅ

Երկրի ձևի մասին պատկերացումները, ինչպես հայտնի է, բազմազան շեն եղել: Հազարամյակներ իշխած տափարակ երկիրը իր տեղը դիջեց գնդաձև երկրին՝ սա է մեր մոլորակի ձևի վերաբերյալ պատկերացումների էվոլյուցիայի պարզեցված սխեման, եթե զանց առնենք ինչպես տափարակ, այնպես էլ գնդային ձևերի հետ կապված վարիացիաները:

Իբրև ելակետ ունենալով այս անվիճելի իրողությունը, հետազոտողը պետք է պարզի, թե ինչ ձև է վերագրվել Երկրին ամեն մի որոշակի ժամանակաշրջանում, ինչպես է ընթացել պատկերացումների փոփոխությունը՝ էվոլյուցիան: Այստեղ մենք կանգ կառնենք մի հարցի վրա. երբ են մարդիկ հանգել Երկրի գնդաձև վուլթյան գաղափարին:

Երկրի ձևի վերաբերյալ մեզ հասած ամենահին տեղեկությունները դեռևս չի կարելի համարել ամենավաղ պատկերացումներ: Նախնական պատկերացումների մասին կարելի է կռահել ելնելով այն փաստից, որ ճանաչողության վաղ փուլում եզրահանգումներն արվում էին կենդանի հայեցողության հիման վրա:

Սա «ճշմարտության իմացման, օրյակտիվ ունեցողության իմացության»¹ դիալեկտիկական ուղու առաջին աստիճանն է, որ Վ. Ի. Լենինի բնութագրմամբ ընթացել է «Կենդանի հայեցողությունից դեպի արտարակա մտածողությունը և դրանից դեպի պրակտիկան»²:

Զգայական ընկալման ճշմարտացիության ու հավաստիության նկատմամբ եղած անխախտ հավատը Երկրին վերագրում էր այն ձևը, ինչ անմիջականորեն դրանցում է աչքը, այսինքն՝ տափարակ ձև (եթև, իհարկե, դիտողը գտնվում է Երկրի վրա):

Ճանաչողության ամենաստորին աստիճանում, անշուշտ, տափարակ է ենթադրվել ոչ միայն Երկիրը, այլև երկինքը: Այս միտքը հաստատվում է սարբեր ժողովուրդների բանահյուսության մեջ: Մարինների և ուղմուրտների լեզենդն, օրինակ, ասում է, որ երկինքը նույնպիսի հարթություն է, ինչ և մեր Երկիրը³:

«Ափսեաձև», «սկավառակաձև», «Երկրային շրջան», «երկնակամար», «գմբեթաձև երկինք» բնորոշումները ճանաչողության ավելի զարգացած փուլի արդյունք են:

Որ երկիրը տափարակ է, բայց կլորավուն տափարակ, այսինքն սկավառակաձև, ռուս անվանի աշխարհագետ Գ. Ն. Անուշինի կարծիքով հորիզոնագծի կորությունից արված հետևությունների արդյունք է: Մեզ թվում է, որ այս հարցում վճռական «օրինակ են ծառայել» արևի և լուսնի սկավառակները:

Ընդունված կարծիքի համաձայն Երկրի ձևի մասին պատկերացումների մեջ բնկումը տեղի ունեցավ մ. թ. ա. առաջին հազարամյակի կեսերին, երբ մ. թ. ա. VI դարում հույն մտածողները առաջ բաշեցին Երկրի գնդաձևության գաղափարը:

Գիտության պատմությունը ծանրակշիռ ապացույցներ չունի այն բանի օգտին, որ Երկրի գնդաձևության մասին պատկերացումներ եղել են դեռևս մինչև հույները, և այնուամենայնիվ հիմքեր կան ենթադրելու, որ գնդաձևության գաղափարը ծնունդ է առել կամ գոնե սաղմնավորվել է Հին Արևելքում: Բայց նախ հույների մասին:

¹ Վ. Ի. Լենին, Երկեր, Գ. 38, Երևան, 1962, էջ 205:

² Նույն տեղում:

³ Տե՛ս, Ե. Երմոլով, Народная сельскохозяйственная мудрость, СПб, 1905, т. IV, стр. 299.

⁴ Տե՛ս, Энциклопедический словарь Брокгауза и Эфрона—«География», XV, стр. 377.

Ուշագրաւ մի «մանրուք»: Ո՞վ է «Երկիրը գունդ է» գաղափարի հեղինակը: Հայտնագործողի դասինինները ոմանք Թալեսին են տալիս, ոմանք՝ Փիլոլայոսին, մյուսները՝ Պյութագորոսին կամ Պարմենիդեսին. հաճախ մատնանշում են ամբողջ դպրոցներ՝ միլեթյան, պյութագորյան և այլն: Գիտության համար թերևս այնքան էլ կարևոր չէ հեղինակության հարցը, բայց եթե այդ միտքը պատկանում է հին հունական մտածողներից որևէ մեկին, ապա ժամանակակիցները պարզ ու որոշակի կնշեն նրա անունը: Մինչդեռ անորոշությունը մեր կարծիքով մատնացույց է անում պատմության խորքերը: Հավանական է, որ դեռևս հույներից առաջ գոյություն է ունեցել Երկրի գնդաձևության գաղափարը, և դա ելակետ է ծառայել Երկրի ձևի մասին հետագա պատկերացումների և ուսմունքների համար: Այդպիսի աղբյուր կարող էր լինել հին արևելյան գիտությունը և, հատկապես, աստղագիտությունը, որ երկրորդ հազարամյակի վերջին և առաջինի սկզբում հասել էր զարգացման բարձր աստիճանի: Ըստ որում, հետազոտողներից ոմանք հակված են հնադարի աստղագիտության օրրանը համարել Հայկական լեռնաշխարհը: Եթե, օրինակ, անցյալ դարի ֆրանսիացի հանրահայտ աստղագետը գտնում է հավանական, որ «առաջին աստղագիտական դիտումներն ու երկնոլորտի առաջին պատկերացումները որոնելու համար պետք է բարձրանալ Արևելք (Եգիպտոսից—Վ. Մ.), դեպի միջին լայնությունները»⁵, ապա փոքր-ինչ ավելի ուշ, անդիացի Օլկոտը միանգամայն որոշակիորեն ցույց է տալիս այդ տեղը. «Աստղագիտության տվյալները համապատասխանում են պատմական և հնագիտական հետազոտություններին այն առումով, որ համաստեղությունների հնագույն պատկերները հորինած մարդիկ հավանաբար ապրել են Եգիպտոսի հովտում, ինչպես նաև Արաբա լեռան շրջակայքում (ընդգծումը իմն է—Վ. Մ.)»⁶... «Դատելով տրամաբանորեն», նա գալիս է այն եզրահանգման, «որ աստղային պատկերների օրրանը կարող է լինել Փոքր Ասիան և Հայաստանը, այսինքն մի տարածք, որ սահմանագծված է Սև, Միջերկրական, Կասպից և էգեյան ծովերով»⁷:

Հետազոտողների այս պնդումները կարելի է ընդունել կամ վիճարկել, բայց չի կարելի չհամաձայնել մի բանում. որ Հայկա-

⁵ К. Фламарин, История неба, СПб, 1875. стр. 152.

⁶ У. Т. Олькотт, Легенды звездного мира, СПб, 1914, стр. 8.

⁷ Նույն տեղում, էջ 9:

կան լեռնաշխարհի բնակիչները զգալի դեր են խաղացել հին արևելյան աստղագիտության ստեղծման գործում, Այն աստղագիտության, որի վրա հետագայում պետք է հենվեր հույների աստղագիտությունը:

Հայտնի բան է, որ հունական բնափոխիտությանը ծնվել է արևելյան գիտության բարբեր հողում: Այս մասին թեև փոքր-ինչ գրոտեսկով, բայց շատ գիպով գեոսես երկու հարյուրամյակ առաջ գրել է գերմանացի բանաստեղծ Ֆ. Հերբելը.

Խորամանկ է ձեր ցեղը հույներ,
Ուրիշներն են սոսկ ձեզ համար մանեկ,
Իսկ դուք զբանից ստեղծել եք ձեր հյուսվածքը սոսկ:
Եվ թող նրանում չկա ոչ մի թեկ
Ձեր իսկ ստեղծած,
Թո՛ղ որ օտարից է ամենը վերցրած—
Վիճարկել չարժե. բոլորը ձերն է
Եվ ձեր հանճարի կնիքն է կրում:

Չնայած բանաստեղծական չափադանցությանը, հեղինակը ճիշտ է նկատել հին հունական գիտության երկու հիմնական մոմենտը. առաջին՝ փոխառության փաստն է՝ և երկրորդ՝ փոխառության բնույթը (այն մեխանիկական չի եղել). հույները փոխ են առել տեղեկություններ, գաղափարներ, օգտվել գիտումների արդյունքներից, բայց ամեն ինչի նկատմամբ ունեցել են քննադատական վերաբերմունք, ելնելով պատճառականության, պլյամսնավորվածության սկզբունքից և համոզված են եղել, որ ճշմարտությունը սահմանված է համարվում միմիայն ապացուցելու ճանապարհով:

Ճիշտ է փոխառությունների ընդհանուր արդյունքի մասին մեր պատկերացումները բավական աղոտ են, որովհետև Արևելքի գիտությունը, ինչպես հայտնի է, ամենևին էլ անկորուստ չի հասել մեզ: Մինչդեռ հույներին քանակական առումով, անտարակույս, շատ ավելի կարգին տեսքով պետք է ներկայացած լինի:

⁸ Փոխառության վերաբերյալ ուշագրավ միտք է հայտնել անգլիացի գիտնական Ռ. Քուդերը. նրա կարծիքով Արևմուտքը պարտավոր է նյութական և այլ կարգի խոշոր օգնություն ցույց տալ Արևելքին, իբրև «վճար-մարում անհամար փոխառությունների համար, որ Արևմուտքը իբրև պարզև վերցրել է Արևելքից էմպիրիկ տեխնոլոգիայի մեծ ավանդույթի ձևով, և որոնք Արևմուտքի հետագա հաջողությունների հիմքն են դարձել» (տե՛ս, Մ. Մ. Ս. Блеккет, Ученый и слаборазвитые страны, в кн.: Наука о науке, М., 1966, стр. 63):

Ամենից առաջ մեզ համար անդարձ կորել են թույլ կամ դեռևս չձևավորված, չամրապնդված ու չհիմնավորված պատկերացումները, գաղափարները, հայացքները, Սեփականացվելով անտիկ բնափիլիսոփայության կողմից, դրանք հետագա զարգացում են ապրել և ձևավորվելուց ու ամրապնդվելուց հետո գիտութայան գանձարանն են մտել իբրև հունական բնափիլիսոփայության նվաճումներ: Ըստ որում ակունքները մոռացվել են, արմատները ջնջվել⁹:

Նման մի բան է կատարվել մեր կարծիքով նաև Երկրի ձևի մասին պատկերացումների հետ: Հույներից առաջ գնդաձևության վերաբերյալ հայացքների գոյության փաստը մատնանշողներեղել են: Դարասկզբին առաջնությունն այս հարցում տրվում էր բաբելացիներին: Որ երկիրը գունդ է, «ինչպես հայտնի է ընդունում էին դեռևս հին Բաբելոնի աստղագետները, այն հիման վրա, որ լուսնի խավարումների ժամանակ Երկիրը նրա վրա կլորստվե՞րագիծ է թողնում»¹⁰,—ասում է գերմանացի հետազոտող Ա. Մարկուզեն, և այս միտքը հաստատում է Վ. Ֆերստերը՝ նրա ժամանակակիցն ու հայրենակիցը. «...այդ ուսմունքի (գնդաձևություն—Վ. Մ.) օրրանը, ուր կատարյալ պարզ պատկերացում են կազմել Երկրի գնդաձևության և նույնիսկ լուսնի տրամագծի նկատմամբ նրա տրամագծի հարաբերության մասին, անշուշտ պետք է համարել բաբելական աստղագիտությունը»¹¹:

Արիստոտելի շնորհիվ «Երկրի գնդաձևության մասին ուսմունքը հասցվեց միանգամայն պարզ գիտական ճշմարտության»¹², —արդարացիորեն նկատում է Վ. Ֆերստերը և այն հանգամանքը, որ Արիստոտելը «խորին վստահությունը» է շարադրում այդ ուսմունքը, նա հավանական է համարում բացատրել բաբելական հին ավանդություններին և դիտումների արդյունքներին Արիստոտելի քաջատեղյակությամբ¹³:

⁹ Ամերիկացի գիտնական Օ. Նելզերաուերը, օրինակ, հավանական է համարում, որ Պտղոմեոսի աստղագիտությունը «զգալի շփոթվ կառուցված է այն արդյունքների վրա, որ նրանից 300 տարի առաջ ստացել է Հիպարքոսը, իսկ վերջինս եղել է ինչպես հունական, այնպես էլ բաբելական գաղափարների ազդեցության տակ» (ընդգծումը իմն է—Վ. Մ.):

¹⁰ Вселенная и человечество, т. 4, СПб, 1903, стр. 416.

¹¹ Вселенная и человечество, т. 3, СПб, 1901, стр. 27.

¹² Նույն տեղում, էջ 38:

¹³ Տե՛ս նույն տեղում:

Այստեղ կարևոր է մտաբերել Արիստոտելի մի «մոլորութիւնը»։ Մեծ հուշը, որ Երկրի գնդաձևութիւնը հասցրեց «միանգամայն պարզ գիտական ճշմարտութեան» ժխտում էր Երկրի շարժումը ժխտում էր, սրովհետև ժամանակի գիտութիւնը ի վիճակի չէր առարկելու նրա փաստարկներին (փաստարկներից զլիսավորը, ինչպես հայտնի է, հետևյալն էր. որեւէ օբյեկտի շուրջ Երկրի պտույտը Երկրից դիտողի մոտ կառաջացնէր աստղերի թվացյալ տեղաշարժ)։ Գուցե Երկրի շարժման հարցում նույնպես գործ ունենք Արեւելքից վերցված, բայց չապացուցված և, այդ պատճառով, չչուրացված ու մերժված գաղափարի հետ։ Այս տեսակետից հետաքրքրական է Պլատոնի խոստովանութիւնը. «Եվ հիրավի, մենք՝ հելլեններս սեփականացնում ենք այն, ինչ փոխ ենք առնում բարբարոսներից, բայց հասցնում ենք վերջնական կատարելութեան» (Պլատոն, «Օրենքներ», 987 E)։

Մենք հետո ենք այն մտքից, թե հունական գիտութիւնը արեւելյանի ժառանգորդն է։ Արեւելքի ու Արեւմուտքի փոխադարձ բարդ կապի մեջ մենք փորձեցինք ցույց տալ ակներև մի իրողութիւն. Երկրի մասին որոշ պատկերացումներ փոխանցվել են հին հույներին և հաստատվել իրրև դուտ հունական գիտութեան նվաճումների Չի բացառվում, որ այդ պատկերացումների շարքում եղած լինի Երկրի գնդաձևութեան գաղափարը։

Սկզբունքորեն համաձայնելով այն բանին, որ ոչինչ չի խանգարել Երկրի գնդաձևութեան գաղափարի ավելի վաղ հայտնւելւուն, քան ընդունված է կարծել, տրամաբանական դատողութիւններից և հեղինակավոր մեջբերումներից անցնենք ուղղակի փաստերին, որոնք ցույց են տալիս «Երկիրը գունդ է» պատկերացման գոյութեան հնարավորութիւնը Հայկական լեռնաշխարհի բնակիչների մոտ։

Ի՞նչ փաստեր են դրանք։ Հնագիտական գտածոներ՝ նույնանման բրոնզե առարկաներ, որոնք հայտնաբերվել են Հայաստանի տարբեր շրջաններում, և մի ժայռապատկեր։

Բրոնզե այդ առարկաներից մեկը պեղվել է Սևանա լճի ավազանում, 30-ական թվականների սկզբին և թվագրվում է մ. թ. ա. X—IX դարերով¹⁴։ Ավելի քան երկու տասնամյակ անց նույնանման առարկաների մի խումբ է պեղել հնագետ Հ. Մնա-

¹⁴ Այդ առարկան ցուցադրվում է Հայաստանի Պետական թանգարանում։ Թանգարանի աշխատակից, հնագետ Հ. Մնացականյանի բանավոր հաղորդման համաձայն այն գտել է Ե. Լալայանը։

ցականյանը Զանգեզուրում¹⁵։ Որ այս վերջինները նախկին գտածոյի ստորին մասն են միայն, կարելի է համոզվել առաջին իսկ հայացքից։

Որքան մեզ հայտնի է, վաղ գտածոյի առաջին հրապարակումն ու մեկնաբանությունը պատկանում է Բ. Ե. Թումանյանին և Հ. Հ. Մնացականյանին¹⁶, որոնց խորին համոզմամբ դա ոչ այլ ինչ է, եթե ոչ «արեզականային համակարգի մոդել»¹⁷։ Հեղինակների մեկնությամբ ցածում պատկերված է Երկիրը՝ շրջապատված երկու օղակով՝ ջրային ու մթնոլորտային շերտերով։ Հակառակ ժայռին գտնվող ճառագայթող սկավառակը, հավանաբար, խորհրդանշում է արեգակը։ Վերջինիս և Երկրի միջև տեղադրված են վեց լուսատուները, ըստ որում Երկրին ամենամոտ գտնվողը, հեղինակների համոզմամբ, Լուսինն է, «քանի որ այդ ժամանակներում գրեթե բոլոր փողովուրդները, այդ թվում նաև Հայկական լեռնաշխարհում, ընդունում էին, որ երկնային լուսատուներից Երկրին ամենամոտը Լուսինն է»¹⁸։ Մնացած հինգ լուսատուները անզեն աչքով երևացող մոլորակներն են։

Այս բավական համոզիչ մեկնաբանության մեջ մեզ համար ամենաարժեքավորը Երկրի գնդաձևության գաղափարն է։ (Հեղինակների գործածած «կլոր մարմին» արտահայտությունը, որ տվյալ դեպքում գնդաձևի իմաստն ունի, հաջող չէ. կլոր կարող է լինել նաև տափարակ մարմինը, օրինակ, սկավառակը։) Սակայն ինքը՝ առարկան, հարթ է, և Երկրի ենթադրյալ ֆիզության ոչ թե գունդ է, այլ մեկը մյուսի մեջ հագած երկու հոծ շրջան։

Ի՞նչ հիմք՝ պնդելու համար, թե Երկիրն այդ մոդելում ենթադրվել է ոչ թե տափարակ, այլ գնդաձև։

Ընդունենք հակառակը՝ որ Երկիրը տափարակ է պատկերված։ Այդ դեպքում ինչու՞ Արեգակը, Լուսինը և հինգ մոլորակները տեղադրված են ոչ թե Երկրի շուրջը, այլ մի կողմում։ Չէ որ տափարակի դեպքում լուսատուները պետք է լինեն գլխավերևում, երկնակամարում, որը զմբեթաձև հենվում է Երկիր սկավառակին։ Եվ արեզականային համակարգի մոդելն էլ համապատասխանաբար իրենից կներկայացնեի հիմքում հարթ շրջան, որի կենտրոնից

¹⁵ Տե՛ս, А. О. Мнацаканян, Находки предметов бронзового века в селении Толорс (в Зангезуре) Армянской ССР, КСИИМК, вып. 54, 1954.

¹⁶ Տե՛ս Բ. Թումանյան, Հ. Մնացականյան, Բրոնզե դարի գոտի-օրացույց, Երևան, 1965, էջ 10—12։

¹⁷ Տե՛ս նույն տեղում։

¹⁸ նույն տեղում, էջ 12։

չրջանի հարթությանը ուղղահայաց բարձրացող հենարանին ամրացված են յուսատունները (հիմքին ամրացված տոնածառի պես), Կատարման տեխնիկայի տեսակետից այն ժամանակների համար դա դատարի բան էր: Բայց բուրրովին այլ բան է ցանկացել արտահայտել հնադարի վարպետը: Ակներև է պատկերման պայմանականությունը. բոլոր երկնային մարմինները գտնվում են նույն հարթության մեջ և իրենք էլ տափարակ են: Իսկ չէ որ այս մոդելը ստեղծած մարդիկ ոչ միայն իմացել են երկնային մարմինների տարածական տեղաբաշխման մասին, այլև շատ լավ տիրապետել են երկրաչափական լեզվին: Կասկած չկա, ուրեմն, որ գործ ունենք տարածական առարկաների պրոյեկցիայի հետ: Երկրագունդն, այսպիսով, պատկերված է իրրև շրջան, իսկ ավելի ճիշտ՝ մեկը մյուսի մեջ գտնվող երկու հոծ շրջանագիծ: Բ. Ն. Թումանյանի և Հ. Հ. Մնացականյանի կարծիքով այդ շրջանագծերը պատկերում են ջրային և օդային ոլորտները: Հ. Հ. Մնացականյանի պեղած բրոնզե առարկաները (թվով 12 հատ), ինչպես ասացինք, համապատասխանում են մեզ ծանոթ մոդելի ստորին մասին, բայց ի տարբերություն նրա, ոչ թե երկու, այլ երեք իրար մեջ օղակված շրջանագծեր են և, այդպիսով, արտահայտում են արդեն եռոյգտ Երկիրը¹⁹, վերստին հաստատելով ավելի վաղ գտածոյի մեկնարանությունը՝ ճշմարտությունը և, մասնավորապես, այն ենթադրությունը, որ նրա ստորին մասը պատկերում է Երկրագունդը:

Այժմ ժայռապատկերի մասին: Դա համեմատաբար վերջերս հայտնաբերել է ճարտարապետ Ս. Պետրոսյանը Գեղամա լեռներում: Թվագրվում է մ. թ. ա. II հազարամյակով: Ժայռապատկերը մի շրջան է, ներսում խաչաձև հատվող երկու արամագծերով, իսկ շրջանագծի արտաքին մասում նրա շուրջը միմյանցից հավասար հեռավորության վրա պատկերված են մարդիկ: Երկրագունդը՝ հակոտնյաներով. այսպես է մեկնարանում իր գտածոն Ս. Պետրոսյանը²⁰: Նրանից առաջ նույն կարծիքն է հայտնել Բ. Ն. Թումանյանը²¹:

¹⁹ Մ. Թ. ա. II հազարամյակում Աշխարհն (=Երկիր) ընդունվում էր իբրև երեք մակրոտարրերի՝ երկրի, երկնքի և նրանց միջև եղած օդային տարածության, հանրագումար: Այս մասին մանրամասն տես, В. М. Маноян, Представления о строении Земли на территории древней Армении, В кн.: Труды IV Закавказской конференции по истории науки, Ереван, 1974. стр. 345—355.

²⁰ Տե՛ս, Вокруг света, № 1, 1971, էջ 17.

²¹ Տե՛ս «Գիտություն և տեխնիկա» № 3, 1969, էջ 11—12:

Ֆանտաստիկ է արդյոք հիշյալ ժայռապատկերի այս մեկնա-
րանութունը, ինչպես դա կարծում է «գնդաձևության» կողմնա-
կիցներից մեկը՝ Ս. Պետրոսյանը: Մենք կարծում ենք, որ ոչ:
Սա մի հիպոթեզ է, որին կարելի է համաձայնել կամ ոչ, բայց
ինչպես առաջին, այնպես էլ երկրորդ դեպքում պետք է ունենալ
վճռական փաստարկներ:

Այսպիսով, մեր համոզմամբ, պետք է վերանայել Երկրի
գնդաձևության գաղափարը հին հույների մենաշնորհը համարելու
արմատացած կարծիքը: Ըստ ամենայնի այդ գաղափարը շատ
ավելի վաղ շրջանի ծնունդ է և այն պետք է փնտրել արևելքի
ժողովուրդների, այդ թվում Հայկական լեռնաշխարհի բնիկների
պատկերացումներում:

В. М. МАНОЯН

О ВРЕМЕНИ ПОЯВЛЕНИЯ ПРЕДСТАВЛЕНИЙ О ШАРООБРАЗНОЙ ФОРМЕ ЗЕМЛИ

(К постановке вопроса)

Резюме

В статье делается попытка пересмотреть укоренившееся мнение о приоритете древнегреческих мыслителей в вопросе о шарообразной форме Земли. Приводятся некоторые доводы в пользу того, что представление Земля-шар зародилось на Древнем Востоке еще в начале II тысячелетия до н. э. В частности, на основе археологического материала делается предположение о наличии представлений об истинной форме Земли также и у обитателей Армянского нагорья.

Однако, ввиду недостаточности фактов автор ограничился обоснованием постановки вопроса.